969

1. Ի՜նչ լավ է, որ ինձ հետ ես, Տե՛ր,
Իմ սրտի մեջ ու իմ կողքին,
Դու՝ արթնացնող մեղքի քնից,
Դեռ խոսում ես Գողգոթայից:

Կանգնեցնում ես Դու ընկածին,
Ում աչքերը Քեզ են սպասում,
Դու ես ճամփան ու նոր ուղին,
Երանի՜ Քեզ ճանաչողին:

2. Այս փոթորկուն չար աշխարհում
Ալիքներ են դեռ հանդիպում,
Տերս կանգնած՝ ձեռքն է մեկնում,
Որ չսուզվեմ ծովի խորքում:

3. Սիրող մի սիրտ լուռ արտասվեց,
Տեր Հիսուսն ինձ համար խաչվեց.
Ինձ հետ ինչ էլ որ պատահի,
Հայտնվում է ժամանակին:

4. Հիսո՛ւս, Դու ես օգնականս,
Այս նեղ ճամփի հանգրվանը:
Օգնի՛ր հասնել Երուսաղեմ,
Այնտեղ էլ Քեզ փառաբանեմ:

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025